ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017թ. դեկտեմբերի 4-ից 7-ը Նայրոբի (Քենիայի Հանրապետություն)՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի առաջին տեղակալ Էրիկ Գրիգորյանի գործուղման վերաբերյալ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

   Էրիկ Գրիգորյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

   ՀՀ բնապահպանության նախարարի առաջին տեղակալ

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏԸ**

   Նայրոբի (Քենիայի Հանրապետություն)

   2017թ. դեկտեմբերի 4-ից 7-ը

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

   ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագիրը:

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

   Մասնակցություն՝ «Միացյալ ազգերի շրջակա միջավայրի գագաթնաժողովի 3-րդ նստաշրջանին»:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ, ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

   Գագաթնաժողովի 3-րդ նստաշրջանը հանդիսանում է Միացյալ ազգերի բարձրագույն մարմինը, որն ուղղված է բնապահպանական խնդիրների լուծմանը: Բարձրաստիճան հանդիպման թեման էր «Դեպի մաքուր մոլորակ»:

   Միջոցառման հիմնական նպատակն էր քննարկել օդի, ջրի, հողի, մարդու առողջության և կենսաբազմազանությանն ուղղված խնդիրները և դրանց աղտոտվածության նվազեցման գործընթացները:

   Բարձրաստիճան հանդիպման շրջանակներում անցկացվեցին ղեկավարների, բազմաթիվ շահագրգիռ կողմերի միջև երկխոսություններ, ամփոփիչ և լիագումար նիստեր, որոնց ընթացքում քննարկվեցին նաև՝

- մշտական ներկայացուցիչների կոմիտեի կողմից ներկայացրած զեկույցը,
- աղտոտվածության մակարդակը նվազեցնելու համար կանխարգելիչ միջոցառումները,
- ներկայացնել յուրաքանչյուր երկրում աղտոտվածության նվազեցման դեմ կատարված գործողությունները:

7. <u>ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ</u>

Գագաթաժողովի ընթացքում հանդիպումներ եմ ունեցել գագաթաժողովի նախագահ Էդգար Գուտիրեես Էսպելետայի և հաջորդ գագաթաժողովի նախագահ ընտրված Սիիմ Կիիսլերի հետ:
ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի տնօրեն Էրիկ Սոլհեյմի հետ քննարկվել է Հայաստանում ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի կողմից իրականացվող հնարավոր ծրագրերի մասին:
Վերջինիս հետ նախնական պայմանավորվածություն է ձեռք բերվել մեքենաների և վառելիքի ուսումնասիրության 25 000 դոլարանոց դրամաշնորհ տրամադրել Հայաստանին:
ՄԱԿ-ի բնապահպանական ծրագրի եվրոպական գրասենյակի տնօրենի հետ քննարկվել է Հայաստանի անդամվճարի վերաբերյալ հարցերը:
Հունաստանի բնապահպանության այլընտրանքային նախարար Սոկրատիս Ֆամելոսի հետ քննարկվել է Հայաստանի և Հունաստանի հանրապետությունների միջև բնապահպանության ոլորտում լայնամասշտաբ համագործակցության հնարավորությունները, մասնավորապես կոնվենցիաների շրջանակներում տեսակետների համադրման և առաջնայնությունների հստակեցման բնագավառներում:
Իրկուտսկի նահագնապետ Սերգեյ Լեվչենկոյի և Տարածաշրջանային լճերի միջազգային ասոցիացիայի նախագահ Ալեքսանդր Տիմչենկոյի հետ քննարկվել է Սևանա լճի անդամակցության և Բայկալ լճի խնդիրների լուծման շրջանակներում հայկական փորձի ուսումնասիրման հարցերը:
Սաուդյան Արաբիայի բնապահպանության, ջրերի և գյուղատնտեսության փոխնախարար Օսամա Ֆեքեհայի հետ քննարկվել է ստորգետնյա ջրերի կառավարման ոլորտում երկու երկրների փորձի ուսումնասիրության հնարավորությունները:
ՌԴ Նայրոբիում մշտական ներկայացուցիչ, Նախարար-դեսպան Վլադիմիր Լենիեվի, արտաքին գործերի նախարարության բնապահպանական բաժնի ղեկավար Վլադիմիր Ուսկովի, փոխտնօրեն Դմիտրի Մաքսիմիչեվի հետ

քննարկվել է բնապահպանության ոլորտում ՀՀ և ՌԴ համագործակցության ընդլայնման հնարավորությունները: Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային հանդիպման ընթացքում իմ կողմից բարձրացված՝ բնապահպանական պլատֆորմները այլ քաղաքական նպատակներով չօգտագործելու առաջարկն աջակցություն է ստացել խմբի մասնակիցների կողմից:

Մոնղոլիայի բնապահպանության նախարար Ցերենբադ Նամսրայի հետ քննարկվել է հանքարդյունաբերության բնապահպանական ազդեցությունների նվազեցման ոլորտում հնարավոր համագործակցության հնարավորությունները:

Գագաթաժողովի ընթացքում հանդիպել եմ Չինաստանի, Հնդկաստանի, Բուլղարիայի, Լիտվայի, Էստոնիայի, Բելգիայի, Շվեդիայի, Նորվեգիայի, Լյուքսեմբուրգի, Նորվեգիայի, Էկվադորի բնապահպանության նախարարների հետ, քննարկել հնարավոր համագործակցության հեռանկրաները:

Առանձին հանդիպում եմ ունեցել Եվրոպական հանձնաժողովի նախագահ Յուրգեն Մյուլլերի և բնապահպանական հարցերով կոմիսար Կարմենու Վելլայի հետ, մանրամասն քննարկել ասոցացման համաձայնագրի ստորագրումից հետո բնապահպանության ոլորտում հնարավոր համագործակցության ընդլայնման շրջանակները:

Հանդիպել եմ նաև կանաչ կլիմայական հիմնադրամի ղեկավարության և Կլիմայի փոփոխության կոնվենցիայի քարտուղարի հետ, քննարկել կլիմայական ֆինանսների ծավալների ավելացման բոլոր հնարավոր տարբերակները, պայմանավորվածություններ է ձեռք բերվել ուղղակիորեն աշխատել համապատասխան կանաչ կլիմայական հիմնադրամի բարձրաստիճան պաշտոնյաների հետ՝ ծրագրերի իրականացման և ֆինանսավորման գործընթացի օպտիմալացման նպատակով:

Գագաթաժողովի ընթացքում հանդես եմ եկել Հայաստանի վերաբերյալ զեկուցմամբ, որից հետո Ադրբեջանի պատվիրակները ևս մեկ անգամ ձայն են խնդրել և կրկին անգամ խոսել գրավված հողերի, փախստականների վերաբերյալ, որոնց ի պատասխան ես կրկին անգամ ելույթ եմ ունեցել և ներկայացրել Արցախյան հիմնահարցի վերաբերյալ պարզաբանումներ:

ՀՀ բնապահպանության
նախարարի առաջին տեղակալ՝

Է.Գրիգորյան